

## ԲԱՐԵՑՈՒՄՈՅ ՀՐՈՒԱՆԴԱՆ

Առաքելոց, Գլանորայ, Թարգմանչաց վաճիք,  
Խս չգիտեմ, քանի՞ հայ ուր մնաց  
Ու մազաղաք շրբունքների քանի՞ փշրանք,  
Որ հոյակերպ քո դռնից ներս մտան կամաց,  
Համբուրեցին վէմերը քո, դասն ու գափիք:  
Ես չգիտեմ, կը հասնի՞ գէք մի հայորդի  
Փյուզումից առաջ թէկուզ վերջին կաւիդ՝  
Խառնուելու քո անիւնին, քո հաղորդին:  
Ես չգիտեմ, քանզի քո մէջ, այնտեղ, այնտե՛զ,  
Ուր հայ մամիկն էր դար առ դար մէջքը կորել  
Ու ծնկներավ սալաքարին փորել սանդեր՝  
Այնտեղ հիմա անյուսօրէն, անմա՞րդկօրէն  
Նախամարդն է գեռ մակազում, նարակում յար,  
Որի աչքին քարն ի՞նչ է որ — ասպար ու գէն՝  
Զարդուսիու համար կառափ ու ողնայար...

Ես չգիտեմ... Սակայն ահա իմ շրբունքին  
Տաք համբոյրներ են պղպջում, եռում անյագ,  
Ձերմուկների՝ պէս Վարշակի, որոնց շոգին  
Սառչում էր եւ քո՛ գմբէքին մի ժամանակ:

\* \* \* \* \*

Եւ տակաւին ես՝ ծնրադիր ու ծնրաֆայլ,  
Սոսուերմերի առջեւ, խուցերդ շառայլող,  
Որ վեշտասան դարեր —մատնան ու գրակալ—  
Զեռքերմ իրենց եղայրների համար գալոց  
Քազմաստեղմնեան նրազների պէս վառեցին,  
Ու եղէզնեայ գրչի ծայրին լոկ լոյս տալով,  
Երերացին, ինչպէս տառերն այգաբացին...

Այսիւն հմայք քի՞չ էր միքէ, Թարգմանչաց վաճիք,  
Քո սրբութեամբ ինձ տուշորող փառքիդ համար,  
Որ ուզեցիր դառնալ նաև քաջացաց աւան,  
Դիւցազնաբերդ, հերոսութեան սիւն ու կամար:

Քի՞չ էր միքէ Խորենացին, որ դու, դեռ դու  
Բացիր նրա խաչաքռուին՝ ազնուազարմ  
Անդրածիկի նայուածքն, իբրև ուխտ ու երգում,  
Թէ խայտակն ոգին հայկեան չի' նուազած.  
Քի՞չ էին ինձ Դաւիթ Անյազքն ու Փարավեցին,  
Որ դու նրանց՝ Սասեոյ ձնան ջրի պէս ջինչ  
Գէորգ Զաւուշ անյադքի շուքն էլ կապեցիր,  
Եւ տակաւին կտրիների՝ կոճիկ ու ջիղ,  
Որոնք քանի, քանի՛ անգամ քեզ, քե՛զ արած  
Գահարդորդ ըմբառութեան կայք ու ամբոց՝  
Խջան քո ձորն ուրինազարդ, իբրեւ քարայժ  
Մազլցեցին Ծիրճկատար՝ լեռդ մամռու,  
Ու քո զանգից աղօքքների ժանգը քերած,  
Հնչեցրին այն արուրային բուն զանգիւնով...

Քաջա՛ց աւան, վանք մեսրոպեա՛ն առաքելոց  
Էն խաչարեր. Խաչաքռունե՛ր անիւնածածկ,  
Որ ձեզ պազնող համբոյրների համար գելոց  
Ու դեռ. բռնի. պարատիկի խիներ դարձաք.  
Ի՞նչ, մեր իշխանք, քագուհիներն իրարու հետ  
Կերտելու մէջ մրցակցեցին նրա՞ համար  
Որ շագախը շարաւ կարծող հոներ ու հէն  
Կործանելու մէջ նգնէին գլեւ իրար.  
Այդ ի՞նչ, մենք շատ կառուցեցինք որ շա՞տ ցաւենք,  
Որքանալով մէ՛ն մի քարի ու փոշու հետ.  
Քանդակեցինք որ նայուածքներ կուն ու կաւէ  
Եօթը վիրաց պատկե՞ր անեն մեր սիրուն յաւէտ.  
Մենք որ հազի՞ւ աստղերին ու լիալուսնին  
Ձեզ վստահում էինք առանց վառ կանքեղի,  
Էհ ի՞նչ, քողեւ ենք ակամայ, որ բորենին  
Զեր մէջ շագիզն իր ցերեկի՞ւ լափէ, քաղի...

## ԱԲՐԱՀԱՄ ԱԼԻՔԵԱՆ

Հասուած Քարեյուսոյ Հրուամկամ Խառնութ

